ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՆՅՈՒԹԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆԻ ԴՈՐՇՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Մենդյան 100-ամյակի առթիվ)

Լրացավ աշխարհահռչակ Հարտարապետ Ա. Հ. Թամանյանի ծննդյան 100-ամյակը։ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվի մի շարք ֆոնդերում պահպանվում են նրա բեղմնավոր կյանքն ու ստեղծարար գործունեությունն արտացոլող շատ ու շատ վավերագրեր։ Բաղմարնույթ և դիտական տեսանկյունից բաղադրիչ արժեք ներկայացնող այդ փաստաթղթերը բացատրում են անսպառ տաղանդի տեր գործչի խոշոր դերն ու մասնակցությունը Սովետական Հայաստանի կարևորագույն կառույցներին ու շինություններին՝ լինի դա համաշխարհային արժեք ունեցող հնությունների պահպանություն, բաղաքների ու գյուղերի նախագծում ու վերակառուցում, թե փողոցների ու հրապարակների հատակագծում ու գեղարվեստական ձևավորում և այլն։

Առաջին անգամ ընթերցողի ուշադրությանը ներկայացվող փաստաթղթերը կազմում են այդ հարուստ նյութի սոսկ մի մասը։

ԷՄՄԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ՄԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ժողկոմխորհի գլխավոր տեխնիկական բաժնի վարիչ, ակադեմիկոս Ա. Հ. Թամանյանի գլխավորագիրը Ժողկոմխորհի նախագահ Լ. Կաշինին՝ Պետրոգրադի և Մոսկվայի բանգարանների առաջնակարգ նկարիչների նկարները ձեռք բերելու մասին

15 հոկտեմբերի 1923 թ.

Ինձ հայտնի է, որ Պետրոգրադի և Մոսկվայի գեղարվեստական թանգարաններում կան մեծ քանակությամբ առաջնակարգ ռուս նկարիչների նկարներ, որոնք կախվելու տեղ չունենալու պատճառով չեն օգտագործվում կամ մասամբ այդ նկարները պատճեն են կազմում այն նկարների, որոնք արդեն կտրված են։ Դրանք պահպանվում են պահեստներում՝ առանց օգտագործվելու։

Ես հույժ ցանկալի եմ դանում միջնորդել ՌՍՖԽՀ կառավարության առաջ՝ Հայաստանի կամ Անդրկովկասյան ֆեդերացիայի կառավարության կողմից ինչպես այդ տեսակի նկարները, այնպես և մասնավոր պետականացված կոլեկցիաներից հանձնելու Հայաստանի հանրապետությանը, մեր ժողովրդի գեղարվեստական դաստիարակման համար։

Այս առաջարկը ընդունելու դեպքում ցանկալի է նշանակել մասնագետներ ու լիազորներ՝ շահագրգռված հանրապետությունների կողմից ընտրու-

թյուն կատարելու համար Պետրոգրադում և Մոսկվայում, և փոխադրելու այդ նկարները այստեղ։

Գերագույն տեխնիկական
բաժնի վարիչ՝ Ա. Թամանյան

Ֆ. 122, ց. 1, գ. 121, էջ 46։ Բնագիր։ Մեքենագիր։

Քաղվածք ՀՍԽՀ ժողկոմխորհի արտակարգ նիստի արձանագրությունից՝ Ա. Թամանյանի կազմած՝ Երևան քաղաքի զարգացման և կարգավորման հատակագիծը հաստատելու մասին

5 ապրիլի 1924 թ.

Լսեցին.— Ակադեմիկոս Ա. Թամանյանի զեկուցումը իր կազմած՝ Երևան քաղաքի զարգացման և կարգավորման հատակագծի մասին։

Որոշեցին.—Ակադեմիկոս Ալեքսանդր Հովհաննեսի Թամանյանի կազմած՝ Երևան քաղաքի զարգացման և կարգավորման հատակագիծը հաստատել։

Անհապաղ ձեռնարկել հատակագիծը տեղում գծանշելու և նշանակելու օտարացնելիք կալվածների սահմանները (կարմիր գծերը)։

Այսօրվանից արգելվում է թե՛ մշտական, և թե՛ ժամանակավոր շենքերի կառուցումը ինչ նպատակով էլ որ լինի այն հողամասերի վրա, որ համաձայն հատակագծի պիտի օտարացվեն...

Ժողկոմխորհի քարտուղար՝ Դ. Պարզյան

Ֆ. 113, ց. 5, գ. 22, թ. 6։ Հաստատված պատճեն։ Մեքենագիր։

Հնությունների պահպանության կոմիտեի նախագահ Ա. Թամանյանի զեկուցագիրը լուսժողկոմին՝ Հաղպատի և Սանահինի հուշարձանների վիճակի մասին

9 հունվարի 1925 թ.

Հաղպատի և Սանահինի հուշարձանների ներկա վիճակի մասին կարող ենք հաղորդել հետևյալը.

Հնությունների պահպանության կոմիտեի հնագիտական էքսպեդիցիան, որ ամառս աշխատում էր Լոռի—Փամբակ գավառում, սեպտեմբերի 20—21-ին եղավ Հաղպատում և Սանահինում՝ ի մոտո ծանոթանալու հուշարձանների դրության հետ։

Երկու տեղումն էլ, մանավանդ Հաղպատում, շենքերը կարիք ունեն տեխնիկական օգնության, անհրաժեշտ է կարգի դնել գլխավորապես տանիր-

ների խախտված մասերը կաթիլքի առաջն առնելու համար, որ մեծ վնաս է հասցնում շենքերին (մանավանդ Համազասպը՝ Հաղպատում)։ Հաղպատի նշանավոր զանգակատան ներքնամասը կարող է կորստաբեր լինել հուշարձանի համար, եթե շտապ օգնություն չհասնեն նրան։

Ինչ վերաբերում է նրանց իրական պահպանությանը, թեև երկու տեղումն էլ նկատվել է գյուղխորհրդի կողմից բավականին ուշադիր վերաբերմունք, սակայն հատուկ պահապանի ներկայությունը հանդիսանում է անհրաժեշտություն. այդպիսիք կարող են լինել տեղի վանահայրերը, սակայն նրանք էլ (այժմ միայն Հաղպատում՝ Զաքարե վրդ. Լալայանց) ներկայումս բոլորովին զրկված են ապրելու միջոցներից։ Վանքի այգին փոքրիկ կտոր վարելահողով և բնակարանի (մի սենյակի) անձեռնմխելիությունը կարող են միանգամայն բավարար միջոց լինել նրանց ապրելու համար, որով այդ հուշարձանները կունենային իրենց սեփական խնամող ձեռքը։

Ուստի խնդրում եմ կարգադրել, որ Հաղպատի և Սանահինի վանահայրերին տրամադրվի վանքի այգին, երեք-չորս դեսյատին վարելահողով և ապրելու համար սենյակ՝ ճանաչելով նրանց իբրև հուշարձանների պահապաններ։ Կոմիտեի կողմից կտրվի նրանց անհրաժեշտ հրահանգներ, իսկ գարնանը կուղարկվի մարմին՝ այդ հուշարձանների դիմացկունության չափը պարզելու, տեխնիկական օգնություն հասցնելու։ Միջոցներ մշակելու հետևանքը նախահաշվի հետ միասին կներկայացվի Ձեզ իր ժամանակին։

Նախագահ՝ Ա. Թամանյան

Գիտնական քարտուղար՝ Աշխարհաբեկ Քալանթար

ՀՑ. 122, ց. 1, գ. 282, էջ 103։ Բնագիր։ Մեքենագիր։

Պետպլանի շինարարա-արդյունաբերական սեկցիայի նախագահ Ա. Թամանյանի զեկուցագիրը Պետպլանի նախագահությանը՝ Դալուլար գյուղին պետական օգնություն տալու մասին

6 փետրվարի 1925 թ.

Շինվող Դալուլար[1] գյուղին օգնություն տալու մասին շինարարա-արդյունաբերական սեկցիան կարծում է՝

1) Անհրաժեշտ է պետական օգնություն տալ Դալուլար գյուղին։ Օգնությունը պետք է լինի այնպիսի ձևով, որպեսզի որոշվի մի շարք այլ գյուղերի համար (մոտ 15 հատ), որոնք արդեն ցանկություն են հայտնել իրենց գյուղերը ձևափոխելու մասին և սպասում են այդ գործում պետական օգնության։ Օգնության ամենից ավելի նպատակահարմար ձևը սեկցիան համարում է երկարատև վարկ 30.000—50.000 ռուբլու չափ, նայելով գյուղի մեծությանը, իսկ բացառիկ դեպքում՝ ավելին։ Աղքատ գյուղերի վերաբերմամբ փոխատվու-

[1] Այժմ Հայկական ՍՍՀ Արտաշատի շրջանի Դալար գյուղը։

թյան կեսը պետք է համարել անվերադարձ, իսկ մյուս կեսն՝ իբրև երկարատև վարկ։

2) Դալուլար գյուղի ձևափոխումը դժբախտաբար իրագործված է ըստ անհաջող նախագծի։ Տների հողամասերը (1350 քառ. սաժեն) չափազանց մեծ են, որի հետևանքով գյուղը խիստ մեծ տարածություն է բռնում։

Ամեն մի գյուղական տնտեսության համար՝ հաշվելով տունը, բակը, այգին և բանջարանոցը, բավական է 600—800 քառ. սաժեն։

3) Գերագույն տեխնիկական բաժնին ներկայացված էր Դալուլարի համար օրինակելի տան նախագծի քննության տեխնիկական կողմը, առանց ի նկատի առնելու էկոնոմիկական կողմի վերաբերյալ Գերագույն տեխնիկական բաժնի դիտողությունը, որ տունը լայնածավալ է։ Նախագծած գյուղի ներկայացուցիչը հայտնեց, որ ներկայացված նախագիծը համապատասխանում է գյուղացոց ցանկությանը և նրանք ի վիճակի են այդպիսի տներ շինելու, եթե ոչ միանգամից, ապա երկու նվագում։ Գերագույն տեխնիկական բաժինը հիմք չգտնելով գյուղացոց խանգարելու իրենց հաշվով լավ տներ շինելու, հնարավոր համարեց այդ նախագիծը հաստատել, սակայն այդ հաստատումը չպետք է հասկացվի այն մտքով, որ Գերագույն տեխնիկական բաժինը անհրաժեշտ է համարել այդպիսի տները շինել պետական հաշվով։

Շինարարա-արդյունաբերական սեկցիայի կարծիքով գյուղերում բավական է 12—20 քառ. սաժեն բնակելի տարածությամբ տներ, բացի համապատասխան շենք-գույքի (ինվենտար) համար։ Յուրաքանչյուր տնտեսության պետական օգնությունը կարող է հասնել 600—1000 ռուբլու։ Իսկ մնացած գումարը պետք է լրացվի իրենց՝ գյուղացիների աշխատանքով։

Այսպիսի հաշվարկման վրա պետք է հիմնված լինի գյուղերի օգնության գործը։ Ընդ սմին, ցանկալի կլիներ պետական օժանդակությունը տալ ոչ թե կանխիկ դրամով, այլ այն նյութերով և պարագաներով, որը դժվար է ունենալ գյուղերում և որ պետությունը կարող է պատրաստելով մեծ քանակությամբ՝ էժանացնել (օրինակ. պատուհաններ, դռներ, վառարաններ, ապակիներ, կիր, կղմինդր, երկաթ, գամեր և այլն)։

4) Գործկոմի նախագահի առաջարկության համաձայն, գյուղական շինարարությունը խրախուսելու նպատակով հարկերը վերացնելու և հետաձգելու դեմ սեկցիան առարկություններ չունի։

Եզրակացություն.

1) Վերոգրյալի հիմամբ սեկցիան առաջարկում է Դալուլար գյուղին տալ երկարատև վարկ 50.000—60.000 ռուբլու չափ՝ այս գումարը հետզհետե հատուցանելու պայմանով։

2) Առաջարկել փոքրացնել տները և պահանջել նոր նախագծեր։

3) Տալ գործկոմի նախագահին տուրքերի վերաբերմամբ առաջարկված արտոնությունները։

Առդիր—գրագրություն 27 թերթից։

Նախագահ՝ Թամանյան

Քարտուղար՝ Գյանջեցյան

Ֆ. 130, ց. 1, գ. 96, թ. 32։ Պատճեն։ Մեքենագիր։

ՀՍԽՀ պետպլանային հանձնաժողովի շին. արդյունաբերական սեկցիայի նախագահ Ա. Թամանյանի գրությունը Պետպլանի նախագահությանը՝ ոռոգման ցանցի վիճակի մասին

21 մարտի 1925 թ.

ՀՍԽՀ ոռոգման ներկայիս ցանցը քայքայման վիճակի մեջ է և կարիք ունի հիմնավոր վերանորոգման։ Տեղ-տեղ բացակայում են շլյուզները, քանդված են գլխամասերը, հենապատերը և բաժանարարները։ Շնորհիվ այդ հանգամանքի գյուղացոց հողերը ջրելու միջոցին անհնարին է ոռոգվող ջուրը օգտագործել տնտեսորեն ու նպատակահարմար կերպով։ Ջրային տնտեսության քննության տվյալների հիման վրա, որ կատարել է ԲԳՏ-ն, վերևում հիշված պատճառների շնորհիվ, ոռոգման ջրի 50%-ից ավելին կորչում է բոլորովին անօգուտ և աննպատակ կերպով, առաջացնելով տեղ-տեղ ճահիճներ։ Նկատի ունենալով այդ հանգամանքը, շին. արդյունաբերական սեկցիան գտնում է, որ Հայջրտնտեսության առաջադրած աշխատանքները անհրաժեշտ են և անհետաձգելի։ Հայջրտնտեսության ներկայացրած 113.500 ռուբլու նախահաշիվը ճիշտ է կազմված և ենթակա է հաստատման[2]։

Առդիր՝ գրություն 72 թերթից։

Նախագահ՝ Ա. Թամանյան
Քարտուղար՝ Գյանջեցյան

Ֆ. 112, ց. 1, գ. 183, թ. 134։ Բնագիր։ Մեքենագիր։

Հայաստանի կերպարվեստի աշխատավորների ընկերության նախագահ Ա. Թամանյանի խնդրագիրը Ժողկոմխորհի նախագահ Լուկաշինին և Լուսժողկոմ Ա. Մոավյանին՝ նկարիչ Հովհաննես Այվազովսկու այրուն օգնություն ցույց տալու մասին

29 ապրիլի 1925 թ.

Սույն մայիսի 2-ին լրանում է մեր հանճարեղ նկարիչ Հովհաննես Այվազովսկու մահվան քսանհինգ ամյակը։ Հանգուցյալի այրին՝ Աննա Նիկիտիչնա Այվազովսկայան, ներկայումս ապրում է Թեոդոսիայում և գտնվում է նյութական ծանր դրության մեջ[3]։

---

2 Նույն գործի թ. 136-ում՝ ՀՍԽՀ Տնտխորհի 1925 թ. ապրիլի 17-ի նիստի արձանագրությունը՝ նախահաշիվը հաստատելու մասին։

3 Հետագայում, հիշյալ թվականից անմիջապես հետո, մինչև իր մահը՝ 1945 թ., Աննա Նիկիտիչնա Բունագյան-Այվազովսկայան Սովետական Հայաստանի կառավարությունից ստացել է անհատական թոշակ (Մ. Ս. Սարգսյան, Հովհաննես Այվազովսկի, Երևան, 1976, էջ 197, ծան. 6)։

Հայաստանի կերպարվեստի աշխատավորների ընկերությունը համոզված լինելով, որ ՀՍԽՀ կառավարությունը չի զլանա թեթևացնելու մեծ դեղարվեստագետի այրիի դրությունը, խնդրում է ձեզ ցույց տալ նրան հնարավոր օգնություն։

Այդ օգնությունը կարող է արտահայտվել միանվագ օժանդակության ձևով, որոշ կենսաթոշակի նշանակումով կամ այրիի մոտ մնացած գեղարվեստական ժառանգության ձեռք բերումով։

Նախագահ՝ Ա. Թամանյան
Քարտուղար՝ Գ. Հովսեփյան

Ֆ. 122, ց. 1, գ. 251, թ. 42։ Բնագիր։ Ձեռագիր։

Հնությունների պահպանության կոմիտեի նախագահ Թամանյանի խնդրագիրը Լուսժողկոմին՝ հնագիտական արժեք ունեցող հողաբլուրներն ու շենքերը պահպանելու մասին

16 մայիսի 1925 թ.

Գավառներից կոմիտեիս հասած տեղեկություններին նայելով, շատ տեղերում գյուղացիները, իրենց դաշտային աշխատանքների ժամանակ, քանդում ու փչացնում են այն հողաբլուրներն ու շենքերի մնացորդները, որոնք հնագիտական մեծ արժեք ունեն և որոնց անձեռնմխելիության համար քանիցս գրված է տեղական գործկոմներին։ Նմուշի համար այս գրությանն առդիր կցում ենք Դվին—Արտաշատի մեր լիազորի նամակի պատճենը։ Խնդրում ենք կտրուկ միջոցներ ձեռք առնել, որ վերջ տրվի նման կործանարար երևույթներին։

Նախագահ՝ Ա. Թամանյան
Գիտական քարտուղար՝ Աշխ. Քալանթար

Ֆ. 122, ց. 1, գ. 282, թ. 69։ Բնագիր։ Ձեռագիր։

ՀՍԽՀ պետպլանային հանձնաժողովի շին-տեխնիկական սեկցիայի նախագահ Ա. Թամանյանի զեկուցագիրը Պետպլանի նախագահությանը՝ Դիլիջանի սողումների մասին

13 հոկտեմբերի 1926 թ.

Ի հետևումն Կենտգործկոմի օգոստոսի 20-ի նո. 2006 գրության՝ Դիլիջանում տեղի ունեցող սողումների և այդ քաղաքը ընդարձակելու, բարեկարգելու և բուժավայրի վերածելու մասին, սեկցիաս ներկայացնում է հետևյալ դիտողությունները։

1) Սողումների մասին.

Հենվելով սողումների վայրը հետազոտող երկրաբանների առդիր կցած զեկուցագրի վրա, սեկցիան գտնում է, որ սպառնացող վտանգի առաջն առնելու համար անհրաժեշտ է վերացնել սողումների պատճառները։ Ճիշտ է,

մինչև այժմ կատարված հետազոտությունները արդեն որոշ չափով պարզել են սողումների պատճառները, սակայն հարցի լրջությունը ի նկատի ունենալով, սեկցիան գտնում է, որ չպետք է բավականանալ մինչև այժմ արածով, այլ անհրաժեշտ է կազմակերպել հարատև դիտողություններ և ուսումնասիրություններ՝ սողումների բնույթի, պատճառների և ձեռք առնվելիք միջոցների։ Այդ նպատակով պետք է կատարել ճշգրիտ հողաչափական նկարագրումներ (геодез. съемки), որոնք հնարավորություն կտան լրիվ գաղափար կազմելու տեղի ունեցող մակերեսային փոփոխությունների մասին։ Միաժամանակ անհրաժեշտ է կատարել հիդրոգեոլոգիական հետազոտություններ սողումների վայրում, հանձնարարելով այդ աշխատանքը մի հմուտ երկրաբանի։

2) Դիլիջանը ընդարձակելու, բարեկարգելու և բուժավայրի վերածելու մասին.

Համաձայնելով անտառային վարչության 1925 թ. հուլիսի 11-ի գրությամբ արած առաջարկին, սեկցիան նույնպես նպատակահարմար չէ համարում հողամասերի հատկացումը ներկայումս այս կամ այն անհատի բնակարանային կարիքը բավարարելու համար։ Սեկցիան գտնում է, որ անհրաժեշտ է կազմել Դիլիջանի բարեկարգման և բուժավայրի ընդհանուր նախագիծը, ներկայացնելով այդպիսին Պետպլանի միջոցով ի հաստատություն ժողկոմխորհի։

Այդ նպատակով անհրաժեշտ է կատարել գեոդեզիական գծանկարումներ քաղաքին և բուժավայրին հատկացվող ամբողջ հողամասի (12 քառ. վերստ տարածությամբ), որից հետո միայն հնարավոր կլինի ձեռնարկել քաղաքի, բուժավայրի, հանգստյան տների, պետական հիմնարկների և այլնի նախագծման, բարեկարգման և կառուցման աշխատանքները։

Նախագահ՝ Ա. Թամանյան
Քարտուղար՝ Գյանջեցյան

Ֆ. 130, ց. 1, գ. 27, թ. 13 և հակ.։ Պատճեն։ Մեքենագիր։

Քաղվածք Լենինականի Գավառային գործադիր կոմիտեի նախագահության նիստի արձանագրությունից՝ քաղաքի նոր հատակագծի հաստատման մասին

6 փետրվարի 1926 թ.

Լսեցին.—Լենինական քաղաքի նոր հատակագիծը կազմելու մասին։

Որոշեցին.—ա) Խնդրել Պետպլանի գերագույն տեխնիկական բաժնի վարիչ ընկ. Ա. Թամանյանին կազմել քաղաքի նոր հատակագիծը և հանձնարարել գործկոմի նախագահ ընկ. Եսայանին՝ պայմանավորվել ընկ. Թամանյանի հետ ծախսերի մասին։

բ) Հանձնարարել տեղտնտեսաժանմունքին պատրաստել բոլոր այդ հարցին վերաբերող նյութերը և տվյալները։

Ֆ. 131, ց. 3, գ. 776, թ. 7։ Հաստատված պատճեն։ Մեքենագիր։

ՀՍԽՀ ճարտարապետական արվեստանոցի նախագահ ակադեմիկ Ա. Թամանյանի գրությունը Լենինականի տեղտնտբաժնի վարիչ Ղարագյոզյանին՝ Լենինական քաղաքի երկրաչափական պլանի մասին

28 փետրվարի 1926 թ.

Ի պատասխան Ձեր ս. թ. փետրվարի 19-ի նամակի հայտնում եմ, որ ես մի քանի անգամ խնդրել եմ Ձեզ, ուղարկել Լենինական քաղաքի երկրաչափական պլանը, որի վրա մատնանշված լինի քաղաքի հողամասի ռելյեֆը և մինչև օրս այդպիսին չեմ ստացել։

Ձեր ուղարկած քարտեզը չի ներկայացնում լրիվ նյութ, այդ պատճառով էլ քաղաքի պլանի կազմելը հետաձգվել է։

Չնայած որ Ձեր ուղարկած նյութը լիովին չի համապատասխանում պահանջներին, մենք արդեն սկսել ենք աշխատանքները և ստիպված եմ մոտ օրերս գործուղել իմ աշխատակցին Լենինական՝ հարկավոր բացերը տեղում լրացնելու համար։

Ակադեմիկ **Ա. Թամանյան**

Ֆ. 131, ց. 3, գ. 776, թ. 2։ Բնագիր։ Մեքենագիր։

Докладная записка А. И. Таманяна в Совнарком ССР Армении по вопросу регулирования реки Гедар для защиты Эривани от наводнений

12 августа 1926 г.

Заключение Зак. Госплана и Зак. Водхоза по вопросу регулирования Гедара для защиты гор. Эривани от наводнений дают основание полагать, что вышеназванные учреждения не возражают против необходимости регулирования Гедара, признают крупное хозяйственное значение этой работы для Армении и находят, что регулирование Гедара должно быть исполнено за счет чрезвычайных кредитов по строительству 1926—1927 гг.

Вместе с тем названные учреждения считают необходимым, для ассигнования средств, представление детального проекта со сметой, составленной на основании изысканий. Эскизный же проект, представленный нами для выяснения примерной стоимости этой работы, как ориентировочный материал, признается Закавказскими органами недостаточным для отпуска столь крупного кредита.

Так как производство изысканий и составление детального проекта и сметы для нас необходимо и без них мы не сможем приступить к работе, то полагал бы согласиться с требованиями Закавказских органов.

Расход на изыскания и составление детального проекта и сметы в сумме 9000 рублей по мнению Зак. НКФина должен быть отнесен на средства Эргорисполкома.

Совнаркомом же Армении возбуждено ходатайство перед. Зак. ВЭС-ом об отпуске ему этой суммы, ввиду невозможности выполнить эту работу на местные средства.

Если Зак. ВЭС-ом в ближайшее время не будет отпущено 9000 рублей, то желательно было бы приступить немедленно к изысканиям и составлению детального проекта и сметы на местные средства, дабы использовать эту осень и этим продвинуть вопрос.

Неиспользование этой осени для изысканий может привести к тому, что разрешение этого вопроса, принявшего затяжной характер, отсрочится еще на год.

Расход 9000 рублей на изыскания и составление проекта (детального) можно включить в смету стоимости работ по регулированию Гедара.

Академик *А. Таманян*

Ф. 113, оп. 5, д. 185, стр. 44. Подлинник. Машинопись.

Հնությունների պահպանության կոմիտեի նախագահ Ա. Թամանյանի խնդրագիրը Լուսժողկոմին՝ Գառնիի Տրդատաբերդի հեթանոսական տաճարը պետական պահպանության հանձնելու մասին

22 դեկտեմբերի 1926 թ.

Մեզ հասած մասնավոր տեղեկությունները և այդ տեղեկությունների հիման վրա կոմիտեիս կատարած քննությունը պարզեցին, որ Գառնիի Տրդատաբերդի հեթանոսական տաճարը շարունակվում է ավերվել շնորհիվ այն բանի, որ Տրդատաբերդի հնագիտական շրջանի մեջ գտնվող այգու օգտագործումը հանձնված է մասնավոր մարդկանց։

Վերոհիշյալ հնագիտական շրջանի անբարեկարգության հարցը կոմիտեիս զբաղեցրել է շատ անգամ և այդ առթիվ նա Ձեզ դիմել էր դեռևս անցյալ տարի № 180 և այս տարի № 337 գրություններով։

Կոմիտեն անհրաժեշտ է համարում անմիջապես հանել վերոհիշյալ պատմական խոշոր նշանակություն ունեցող վայրը մասնավոր մարդկանց օգտագործումից և հանձնել, համաձայն հնությունների կոմիտեի դեկրետի պար. 1, կոմիտեիս խնամքին, որի համար նա խնդրում է Ձեզ միջնորդել համապատասխան պետական օրգաններում։

Սրան կցում ենք № 180 (1925 թ.) և 337 (1926 թ.) գրությունների պատճենները։

Նախագահ՝ Ա. Թամանյան

Ֆ. 122, ց. 1, գ. 937, թ. 16։ Բնագիր։ Ձեռագիր։

Թամանյանի ելույթը ԿԳԿ-ի II նստաշրջանի նիստում

15 սեպտեմբերի 1927 թ.

Թույլ տվեք, ընկերներ, աշխատավոր ինտելիգենցիայի կողմից արտահայտվել խորհրդային Հայաստանի Կենտգործկոմի նախագահի զեկուցման առթիվ։ Զափազանց մեծ է պատերազմի վտանգի հարցը։ Մենք չենք կարող

մնալ անտարբեր դեպի այդ հարցը, սակայն պիտի խոստովանել, որ մեր ուշադրությունը ուժեղ կերպով գրավում է այն միտքը, թե պատերազմի վտանգը ինչպես կանդրադառնա Հայաստանի Հանրապետության վրա, ինչ կլինի, եթե վտանգը իրականանա, ինչ պիտի կատարվի մեր հողի վրա, որտեղ ժողովուրդը համաշխարհային վերջին պատերազմի հետևանքով բազմաթիվ անբախտություն ստանալուց հետո, շնորհիվ խորհրդային իշխանության սկսել է ուժեղ թափով վերաշինել իր երկիրը և վերականգնել քայքայված տնտեսությունը։ Այդ միտքը թույլ չի տալիս մեզ անտարբեր լինել դեպի սպառնող վտանգը։ Պարտք եմ համարում ասելու ձեզ, որ մեր մասնագետներից շատերը հեղափոխությունից առաջ տարել են զանազան պատասխանատու կարևոր գործեր, բայց այդ աշխատանքը երբեք չի եղել մեզ համար այնքան քաղցր, ինչպիսին է մեր աշխատանքը խորհրդային Հայաստանում, որովհետև այստեղ ինչ որ շինենք, թեկուզ մասշտաբով ավելի փոքր, ջրանցք, կայան, տուն, յուրաքանչյուր շինված սերտ կապված է ժողովրդի կյանքի հետ։ Աշխատանքի ընթացքում դու տեսնում ես, թե ինչպես է առաջադիմում մեր ժողովուրդը և այդ բոլորը շնորհիվ խորհրդային իշխանության, որ շատ ճիշտ ուղի է բռնել՝ կապելով Հայաստանը Խորհրդային Հանրապետությունների Միության հետ։ Աննկարելի հանցանք կգործեն հայ ժողովրդի դեմ այն ուժերը, որոնք կհարձակվեն մեր երկրի վրա, կընդհատեն մեր նորմալ կյանքը։ Մենք ողջունում ենք խորհրդային իշխանությանը, մենք կմիացնենք մեր ուժերը խորհրդային իշխանությունը պաշտպանելու համար։

Ֆ. 112, ց. 3, գ. 121, թ. 114։ Պատճեն։ Մեքենագիր։

Հնությունների պահպանության կոմիտեի նախագահ Ա. Թամանյանի խնդրագիրը ՀՍԽՀ Լուսավորության կոմիսար Ա. Մռավյանին՝ Լենինականի ավազուտներում գտնված հնէաբանական արժեք ունեցող իրերի մասին

3 մարտի 1928 թ.

Անցած աշնանը Լենինականի մոտերն ավազուտներում գտնված և կոմիտեիս ջանքերով ձեռք բերված մամոնտի և այլ ոսկրոտիներ (60-ից ավելի խոշոր և բազմաթիվ մանր կտորներ) դեռևս գտնվում են կոմիտեում։ Նման հնէաբանական նյութերի պահպանությունը և գիտական ուսումնասիրությունը պետք է հանձնվի մի հատուկ հիմնարկության, որն ունենա այս հարմարությունները։ Կոմիտեիս կարծիքով պետական համալսարանն այն հարմարագույն հիմնարկությունն է, որի մոտ պետք է կենտրոնացվեն նման հնէաբանական իրերը։

Կոմիտես խնդրում է Ձեր կարգադրությունը։

Նախագահ՝ Ա. Թամանյան

Գիտնական քարտուղար՝ Աշխ. Քալանթար

Ֆ. 122, ց. 1, գ. 937, էջ 72։ Բնագիր, Մեքենագիր։

Հնությունների պահպանության կոմիտեի նախագահ Ա. Թամանյանի խնդրագիրը Լուսժողկոմին՝ Հռիփսիմեի և Գայանեի հուշարձանների պահպանության մասին

19 մարտի 1928 թ.

Հռիփսիմեի և Գայանեի հուշարձանների պահպանության համար հատկացված էին Ժողկոմխորհի և Հողժողկոմատի կողմից և տրամադրված կոմիտեին որոշ հողամասեր։

Անցյալ տարի Հողժողկոմի կարգադրությամբ այդ հողերը առնվելով կոմիտեի իրավասությունից, օգտագործության հանձնվեցին էշմիածնին, որի հետ միաժամանակ նրանց էր անցնում նաև հուշարձանների տեխնիկական պահպանության ծախսը։

Քանի որ այժմ, կառավարության կարգադրությամբ, էշմիածնից ետ են առնվում բոլոր հողերը, ուստի խնդրում ենք Ձեր միջնորդությունը՝ վերադարձնելու կոմիտեին իրենց վերցված հողամասերը, քանի որ առանց այդ հողերի չկա մի այլ աղբյուր, որով կոմիտեն կարողանար հոգալ հիշյալ հուշարձանների պահպանությունը։

Նախագահ՝ Ա. Թամանյան
Գիտական քարտուղար՝ Աշխ. Քալանթար

Ֆ. 122, ց. 1, գ. 937, էջ 65։ Բնագիր։ Մեքենագիր։

Ակադեմիկ Ա. Թամանյանի զեկուցումը ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդին՝ փոստ-հեռագրատան և պետբանկի նոր շենքերի կառուցման համար հողեր հատկացնելու մասին

4 մարտի 1929 թ.

Փոստ-հեռագրատան և պետբանկի Երևանի բաժանմունքի նոր շենքերի կառուցման համար հողամասեր հատկացնելու վերաբերյալ ես պարտ եմ համարում զեկուցել հետևյալը։

Ռուբենի և Նալբանդյանի փողոցների անկյան հողամասը, համաձայն հաստատված հատակագծի, ընկնում է Լենինի հրապարակի տակ, որի կենտրոնում ծրագրված է կառուցել Կենտգործկոմի և Ժողկոմխորհի նոր շենքը։ Ուստի այդ հողամասերը տրամադրել փոստ-հեռագրատան և պետբանկի շենքերի համար, անկարելի է։ Փոխարեն այդ հողամասերի, ես առաջարկում եմ փոստ-հեռագրատան շենքի համար հատկացնել հողամաս ըստ կցված հատակագծի A նշանով։ Այդ հողամասը գլխավոր ճակատով դուրս է գալիս Լենինի հրապարակի վրա և ունի շատ գեղեցիկ դիրք։ Սահմանները փաղմոտ են Լենինի հրապարակը, Ամիրյան, Մասիսի, Ռոզա Լյուքսեմբուրգի փողոցները։ Այս հողամասի մեծ մասը արդեն պատկանում է փոստ-հեռագրատան վարչությանը։ Մնում է լրացնել հարևան հողամասով, որոնց վրա կարևոր շենքեր չկան, բացի մի քանի հողե աննշան տներից։

Հիշյալ հողամասի հարցը ես համաձայնեցրել եմ վարչության ներկայացուցիչ Ասատրյանի հետ, որը հայտնել է ինձ, որ վարչությունը մատնանշված հողամասով միանգամայն բավարարվում է և խնդրում է հաստատել այդ։

Պետական բանկի շենքի համար ես բանակցել եմ բանկի վարիչ, ընկ. Ջաղեթյանի հետ և համաձայնության ենք եկել հետևյալ երկու հողամասերի վերաբերյալ. ըստ կցված հատակագծի B (Խորածառի ակումբի տեղը) և C —Ռուբենի և Աբովյանի փողոցների անկյունը։

Այս հողամասերը երկուսն էլ հարմար են շենքի և գեղեցիկ դիրք ունեն։ Սակայն բանկի վարչությունը գերադասում է B (Խորածառի ակումբ) հողամասը։

Հաղորդելով այդ ամենի մասին, միջնորդում եմ ժողկոմխորհի առաջ, փոստ-հեռագրատան շենքի համար հատկացնել A հողամասը, իսկ պետբանկի համար՝ B հողամասը։ Իսկ եթե B հողամասի տրամադրելը անկարելի համարվի, տրամադրել C հողամասը։

Ակադեմիկ Ա. Թամանյան

Ֆ. 113, ց. 43, գ. 687, թ. 84։ Բնագիր։ Մեքենագիր։